

զոհերը կը բազմացնէին եւ թափօրով ի ձայն երգոց քաղաքէն դուրս կ'ելլէին աղօթքի համար: Այս ամէնուն հակառակ երկինք անողոք կը մնար: Եօթն օր բարեպաշտական ամէն ուխտ կատարելէ վերջ, ամէն ոք իր զբաղումին կը դառնար: Քրիստոնեաները կը զգային թէ Մարնայի վարկը խախտած էր, և աննրման առիթ մը կը ներկայանար յայտնելու իրենց հաւատքին մեծութիւնը և դազրեցնելու այն գէշ լուրերը որ կը տարածուէին ընդդէմ նորընտիր եպիսկոպոսին: Ինքն էր որ, կ'ըսէին, քաղաքին դժբախտութիւնը կը բերէր, Մարնայի մէկ պատգամը արդէն գուշակած էր զայն: Եպիսկոպոսը իր ժողովուրդին խնդրանքներուն վրայ աղօթքի արտակարգ պաշտամունք մը կազմակերպեց: Իրենեայ եկեղեցիին մէջ, գիշեր մը հսկում կատարելէ յետոյ, առաւօտուն՝ Ս. Խաչն ի գլուխ դուրս ելան դէպի արեւմտեան հին եկեղեցին, ուր կատարեցին աղօթքի պաշտամունք մը: Նոյն տեղէն թափօրը եկաւ Ս. Տիմոթէոսի(*) վկայարանը, յետոյ ուղղուեցաւ դէպի քաղաք: Երբ պարսպին մօտերը հասան, կէսօրուան ժամը Յին, դուռը փակ գտան: Մուկուանդները այս միջոցը գտած էին արգիլելու քրիստոնեաները կատարել իրենց արարողութիւնը, այսպէս կարծելով ոչնչութեան մատ-

(*) Յուլիանոս Ուրացոյի ժամանակ Գագա իր մասնաւոր նահասակները ունեցած է: Եւսեբիոս կուսայ անոնց անունները՝ Տիմոթէոս, Պօղոս, Վալսնթին անանուն կոյսի մը հետ: Տիմոթէոս ունեցած է իր եկեղեցին Գագայի մէջ ուր կը պահուէին սուրբերու մասունքներ: Այն երկու կարեւոր եկեղեցիները՝ որոնց վրայ Գագացի Կրիկոս արուեստի պատմագէտներուն համար քողած է խիստ բանկազին նկարագրութիւն մը, կը կոչուին **Ս. Սարգիս** եւ **Ս. Սեփանոս** (O. C. M. էջ 219):